

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՄԲՈՆՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐ

Հոլովը և հոլովունը հայերենի ձևաբանական կառուցվածքի կարևորագույն իրողություններից են: Հոլովի միջոցով գոյական անունը՝ իր լրիվ ծավալով, և դերանունը ոչ լրիվ ծավալով, այսինքն՝ նրանք, որոնք հոլովվում են, արտահայտում են քերականական այլևայլ իմաստներ և այդ իմաստներով ձևավորում բառակապակցության եզրեր, նախադասության անդամներ:

Այսպիսով՝ հոլովը, լինելով քերականական կարգ, գործում է քերականության երկու՝ ձևաբանական և շարահյուսական մակարդակներում: Իր ձևակազմությամբ և արտահայտած քերականական իմաստներով այն ձևաբանական մակարդակի միավոր է, խոսքի մեջ ունեցած իր գործառնություն՝ շարահյուսական միավոր: Ձևաբանության մեջ այն ձևավորում է հոլովական հարացույցի անդամը՝ դառնալով համապատասխան հարացույցի միավոր: Շարահյուսական մակարդակում այն ձևավորում է համապատասխան բառակապակցության գերադաս կամ ստորադաս եզրերը, կամ երկուսը միասին, նախադասության մեջ նրա անդամը՝ ներառյալ անվանաբայական ստորոգյալի գոյական անունով արտահայտված ստորոգելին:

Հայերենը, հայտնի է, հնդեվրոպական լեզվաընտանիքի տասնմեկ ճյուղավորումներից մեկն է, առանձին ճյուղ: Այն ժառանգել է նախամայր լեզվի կամ, ինչպես անվանում են վերջին շրջանի լեզվաբանական աշխատություններում, նախատիպի կամ նախատիպ լեզվի հոլովական համակարգը իր ընդհանուր ամբողջության մեջ: Իր գրի առնվելու պահից անցել է զարգացման երեք փուլեր՝ հին հայերեն, միջին հայերեն և աշխարհաբար կամ Նոր հայերեն: Վերջինս ունի լեզվական երկու տարբերակներ՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Թեև սրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է լեզվական տարբերակներ, սակայն նախատիպից ժառանգած հոլովական համակարգը նրանք հիմնականում պահպանել են չնչին փոփոխություններով:

Նախատիպի ութ հոլովներից զրաբարը կորցրել է կոչականն ու ներգոյականը, պահել է վեցը՝ *ուղղականը, սեռականը, տրականը, հայցականը, բացառականը և գործիականը*: Սրանք էլ, հասկանալի է, տարբեր կաղապարումներով անցել են նախ՝ միջին հայերենին, այստեղից էլ՝ Նոր հայերենին: Անցման ճանապարհին տեղի ունեցել տեղաշարժեր թե՛ որակական, թե՛ քանակական առումներով: Անվան հոլովներից սեռականը և հայցականը կորցրել են իրենց սեփական ձևը և նույնացել առաջինը տրականի հետ,

երկրորդը հիմնականում ուղղականի, մասամբ էլ տրականի հետ: Երկու հոլովների կորստի դիմաց արևելյան մի շարք բարբառներում և բուն իսկ արևելահայ գրական լեզվում գոյացել է նոր մի հոլով՝ ներգոյականը: Ըստ էության վերականգնվել է հնդեվրոպական նախատիպի համանուն հոլովը, սակայն, հասկանալի է, բոլորովին նոր ձևակազմությամբ:

Հոլովի կարգը տիպաբանական և ձևակազմական տարբեր հատկանիշներով առկա է հնդեվրոպական լեզվաընտանիքի շատ այլ լեզուներում, որոնցում այս կամ այն տեսքով պահպանված հոլովական համակարգերի վերաբերյալ հրապարակի վրա եղած դիտարկումները իրենց ընդհանրություններով հանդերձ հաճախ դրսևորում են նաև զգալի տարբերություններ: Այնպես որ ճիշտ չի լինի բուն հայերենի հոլովների քննությունը կատարել՝ առանց գոնե համառոտակի ծանոթանալու հայ քերականների և այլոց տեսակետներին ու տեսություններին:

Ընդհանուր ելակետային սկզբունքը, որ գտնում ենք գրեթե բոլոր սահմանումներում, այն է, որ հոլովը քերականական կարգ է իր արտահայտած որոշակի իմաստով և այդ իմաստի արտահայտման, տվյալ լեզվին բնորոշ որոշակի ձևով:

Ս. Աբեղյանը գրում է. «Ի՞նչ է *հոլով* ասածը, եթե ոչ հոլովելի բառերի զանազան *ձևերը* /form/, որ կազմվում են մեծ մասամբ հոլովական վերջավորություններով: Այդ ձևերը ցույց են տալիս զանազան կախման հարաբերություններ տեղի, ժամանակի, պատճառի և այլն, որոնք իմաստով՝ անունն ու դերանունը խոսքի մեջ կապվում են մի ուրիշ բառի հետ»¹:

Հ. Աճառյանը ևս շեշտադրում է հոլովական ձևն ու նրա արտահայտած հարաբերությունը: «Այն մասնիկները, - գրում է նա, - որոնք, կցվելով անուններին կամ դերանուններին, որոշում են նրանց զանազան առնչությունները ուրիշ բառերի հետ, առանց, սակայն, նրանց հիմնական իմաստը փոխելու և միայն մի հանգամանք կամ պարագա են ավելացնում նրան, կոչվում են *հոլովական մասնիկներ*, իսկ այն բառը, որին կցվել է հոլովական այս կամ այն մասնիկը, նրա հետ միասին վերցրած դառնում է հոլով»²:

Հայ երկու նշանավոր լեզվաբաններն էլ հոլովը ըմբռնում են որպես հոլովական ձևի և նրա արտահայտած իմաստի միասնությամբ հանդես եկող քերականական կարգ: Աճառյանը ավելացնում է, որ հոլովական ձևը որոշում է բառի քերականական իմաստը /«զանազան առնչությունները ուրիշ բառերի հետ»/ առանց փոխելու բառի իմաստը /«հիմնական իմաստը»/:

¹ Ս. Աբեղյան, Աշխարհաբարի հոլովները, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 571:

² Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Եր., 1957, էջ 313:

Գ. Սևակը, մեղադրելով ձևապաշտության /ֆորմալիզմի/ մեջ, մերժում է նրա ուսմունքը, ինքը, սակայն, չի տալիս հոլովի կարգի սահմանումը: Գրում է. «Հոլով և ձև: Յուրաքանչյուր հոլով, ինչպես և լեզվական ամեն մի իմաստ, անշուշտ, պետք է արտահայտվի որոշ ձևով: Ձևը հոլովի իմաստի /բովանդակության/ պայմանական արտահայտությունն է: Դրանք հակադրությունների միասնությունն են հանդիսանում, և այդ հակադրամիասնության մեջ առաջնությունը, իհարկե, պատկանում է բովանդակությանը, այսինքն հոլովի իմաստին բառահարաբերական այս կամ այն կոնկրետ իմաստին»³: Առաջնությունը իմաստին տալու սկզբունքը Սևակին թույլ է տալիս կանխավ որոշելու հոլովական նշանակությունը և երկրորդաբար միայն փորձելու գտնել համապատասխան բովանդակության արտահայտման համար անհրաժեշտ ձևը:

Դարիբյանը հոլովի կարգը և հոլովումը բնութագրում է մեկ ընդհանուր սահմանումով: «Գոյականների կարևոր քերականական հատկանիշն է, - գրում է նա, - նրանց հոլովումը, այսինքն վերջավորություններ ստանալը կամ բառի վերջնամասը փոխելը՝ զանազան հարաբերություններ արտահայտելու նպատակով»⁴: Հոլովումը գրեթե նույն կերպ է ըմբռնում հեղինակը ավելի ուշ հրատարակած մի այլ աշխատության մեջ, որտեղ կարդում ենք. «Հոլովում ասելով հասկացվում է գոյականի կրած փոփոխությունը նախադասության մեջ նրա անդամը դառնալու կապակցությամբ»⁵: Որ *հոլովը* և *հոլովումը* երկու ձևակերպումներում էլ ակնհայտորեն չփոփած են, դա դեռ հարցի մի կողմն է. հարցի մյուս կողմն այն է, որ եթե առաջին սահմանման մեջ այսպես թե այնպես ակնարկ կա հոլովի ձևաբանական իմաստի մասին, ապա երկրորդ սահմանման մեջ մոռացության է տրվել հոլովի ձևաբանական կարգային հատկությունը, և առաջին գծի վրա է եկել «հոլովման» իբրև թե շարահյուսական գործառույթը՝ «նախադասության մեջ նրա անդամը դառնալու կապակցությամբ»: Երկրորդ սահմանման մեջ թույլ են տրվել 2 անճշտություններ.

ա/ հոլովական իմաստը նույնացված է հոլովի շարահյուսական գործառույթի հետ.

բ/ հոլովը չփոփված է հոլովման հետ: Հոլովը անվան /և դերանվան/ քերականական կարգ է իր համապատասխան ձևաիմաստային հատկանիշներով, հոլովումը անվան /դերանվան և առհասարակ հոլովվող բառի/ ձևակազմական շարքն է ըստ հոլովական հատկանիշի, հոլովական կաղապարման տիպը կամ տեսակը, հայերենում առավելապես սեռական-տրականի, մասամբ բացառականի և գործիականի ձևակազմության ընդհանուր համակարգը:

³ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 256:

⁴ Ա. Դարիբյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր., 1954, էջ 178:

⁵ Ա. Դարիբյան, Հայ մանկավարժական լեզվաբանություն, Եր., 1969, էջ 145:

Ինչպես նկատեցինք, ոչ Գ. Սևակը, ոչ մանավանդ Ար. Ղարիբյանը ոչ միայն նոր բան չավելացրին Աբեղյանի և Աճառյանի՝ հոլովի ըմբռնմանն ու մեկնությանը, այլև ոչ ճիշտ մերկայացրին նրա քերականական կարգային էությունը:

Հոլովների խնդրին բնականաբար անդրադարձել են նաև այլազգի լեզվաբանները: Ժամանակակից ռուս քերականագիտական մտքի հիմնադիրներից մեկը՝ Վ. Վինոգրադովը, հոլովը սահմանում է գրեթե նույն հատկանիշների մատնանշումով, ինչպես Աբեղյանն ու Աճառյանը: «Հոլովը, - գրում է նա, - անվան այն ձևն է, որը դրսևորում է նրա առնչությունը խոսքի մեջ՝ ուրիշ բառերի հետ»⁶:

Այս ձևակերպումը գրեթե նույնությամբ արտացոլված ենք գտնում հետագա տասնամյակների ընթացքում հրատարակված ռուսական մի շարք աղբյուրներում:

Այսպես՝ հայազգի ռուս նշանավոր լեզվաբան Ռ. Բուդաղովը գրում է. «Հոլովը քերականական իմաստի և վերջավորության միասնությամբ հանդես եկող ձևաբանական կարգ է, որ արտահայտում է գոյականի անվան հարաբերությունը ուրիշ գոյականի կամ բայի հետ»⁷:

Նշելով հանդերձ, որ հոլովը երկմակարդակ իրողություն է, ռուս քերականագիտության մեջ հոլովական իմաստը հստակորեն տարբերակում են շարահյուսական գործառույթից:

Սիլուսլավսկին գրում է. «Երկակիությունը հատուկ է նաև գոյականների հոլովի կարգին: Հոլովն ունի անվանողական արժեք /նկատի ունի հոլովի իմաստային կառուցվածքը կամ արժեքը - Ա. Ա./: Այն կապակցվելով նրանով կառավարվող բառույթների հետ, որոշում է մի առարկայի՝ այլ առարկայի կամ գործողության միջև եղած հարաբերությունների տիպը»⁸:

«Ժամանակակից ռուսաց գրական լեզու» բուհական դասագրքում կարդում ենք. «Հոլովը գոյական անվան բառափոխական կարգ է, որ արտահայտում է առարկայի հարաբերությունը այլ առարկաներին, գործողություններին, հատկանիշներին»⁹: Սեկ այլ դասագրքում կարդում ենք. «Հոլովի կարգը անվան /գոյականի, գոյականական դերանվան և թվականի/ բառափոխական կարգ է, որ դրսևորվում է իրար հակադիր մի շարք այնպիսի ձևերի համա-

⁶ В. Виноградов, Русский язык, М., 1947, ст. 167.

⁷ Р. Будагов, Очерки по языкознанию, М., 1953, ст. 168.

⁸ Краткая русская грамматика, М., 1989, ст. 161.

⁹ И. Г. Милославский, Морфологические категории современного русского языка, М., 1981, ст. 69.

կարգում, որոնք ցույց են տալիս անվան հարաբերությունը մեկ ուրիշ բառի նկատմամբ բառակապակցության կամ նախադասության կազմում»¹⁰:

Այս բոլոր ձևակերպումներից և շատ այլ դիտարկումներից, որոնց հնարավորություն չունենք անդրադառնալու, բխում են հետևյալ դրույթները.

1. Հոլովը նախ և առաջ *ձև է*, որ կառչած է հոլովվող բառին: Ուրեմն՝ հոլովվող բառը *բառաձև* է, ինչպես այլ բառաձևերը, օրինակ՝ բայի դերբայական կամ եղանակաժամանակային ձևերը /բայաձևերը/: Հոլովված բառաձևը կարող է կազմված լինել՝

ա/ *բառաբուն + վերջավորություն* կաղապարով

բ/ բառաբնի մեկ կամ ավելի հնչյունների փոփոխությամբ /հերթագայությամբ կամ ծայնդարծով/:

2. Հոլովը արտահայտում է *իմաստ /կամ բովանդակություն/*:

Շատ ձևակերպումներում, ինչպես տեսանք, հոլովական իմաստ ասելով՝ հասկանում են մի առարկայի՝ այլ մի առարկայի կամ գործողության /հատկանիշի/ հանդեպ ունեցած *հարաբերությունը*: Հոլովված բառը, այսպիսով, բովանդակում է երկու իմաստներ, որոնցից մեկը բառի անվանողական իմաստն է, այլ կերպ ասած՝ բառույթի իմաստը, մյուսը՝ առարկայական հարաբերությունը, որ քերականական իմաստն է, որը, ինչպես տեսանք, որոշ քերականներ նույնպես համարում են *անվանողական* իմաստ /հոլովի իմաստային կամ քերականական արժեքը. Ի. Միլոսլավսկի/:

3. Հոլովական իմաստը արտահայտվում է հոլովական որոշակի ձևով՝ վերջավորությամբ կամ հերթագայությամբ: Առանց հոլովական տարբերակիչ ձևի չկա հոլովական իմաստ, ուրեմն և՛ հոլով:

4. Հոլովի քերականական կարգի հիմքում ընկած է հոլովաձևերի բազմությունը՝ համապատասխան հոլովական իմաստներով: Հոլովաձևերի բազմությունը կառուցվում է հակադրության հիման վրա: Եթե չկա ձևերի հակադրություն, չկա ուրեմն և ձևերի բազմություն, չկա հոլովաձև և հոլով: Հոլովաձևերի բազմության նվազագույն արտահայտությունը երկանդամ հակադրությունն է: Կան հոլովական ձևերի բազմանդամ հակադրությամբ լեզուներ:

Այսպես հունգարերենում հոլովաձևերի բազմությունը ունի 26 հակադիր ձևեր, ուրեմն այդքան էլ հոլով: Ֆիններենը ունի 16 հոլով, էստոներենը՝ 14, վրացերենը՝ 12, ռուսերենը՝ 6, հայերենը՝ 5, անգլերենը՝ 2:

Հին պարսկերենը արդեն կորցրել էր հոլովական վերջավորությունները, դրանց հետ միասին՝ նաև հոլովի կարգը: Հոլովական իմաստները արտահայտվում էին նախադրություններով ու հետադրություններով: Միջին պարսկե-

¹⁰ П. А. Лекант, И. Г. Гольцова, В. П. Жуков и др., Современный русский литературный язык, М., 1982, ст. 182.

րենը պահպանվեցին, չունեն ոչ մի հոլով: Ուշ շրջանում իբրև սեռականի ցուցիչ սկսեց կիրառվել «իզաֆեթը» /«էզաֆե» - հավելադիր, հավելում/, որը անցավ նոր պարսկերենին: Այստեղ, այսպիսով, վերականգնվեց նախկին մեռած հոլովական համակարգի մի մասը. ձևավորվեց հոլովական նոր մի համակարգ երկանդամ հակադրությամբ: Խնդիրն այն է, որ սեռականի գոյացումով հոլովի արժեք ստացավ նաև բառի ուղիղ ձևը ուղղական հոլովը՝ որպես երկանդամ հակադրության երկրորդ բաղադրիչ:

5. Որոշ ձևակերպումներում ակնարկվում է նաև հոլովի շարահյուսական արժեքի մասին: Հոլովը, իբրև ձևաբանական միավոր, միջոց է հաջորդ ավելի բարձր շարահյուսական մակարդակի միավոր ձևավորելու համար: Հոլովված բառածևը հանդես է գալիս իբրև բառակապակցության գերադաս կամ ստորադաս եզր, նախադասության միավոր կամ կապի խնդիր /կապվող խնդիր/: «Հոլովը բառածև է, - նկատում է է. Աղայանը, - հետևաբար նա ձևաբանական մակարդակի միավորն է և, իբրև այդպիսին, շարահյուսական միավորների բաղադրույթ: Սա հոլովի, որպես բառածևի բաղադրական դերն է, նրա դերը լեզվի կառուցվածքի մեջ, ինչպես որ, ասենք, հնչույթի դերն է կազմել, կառուցել կամ կերտել ձևության ձևակարգակի միավորներ ձևությունը»¹¹:

Այսպիսով հոլովը ձևաբանական միավոր է, և շարահյուսական կիրառությունը նրա ներուճակային հատկությունն է և ոչ թե էությունը: Ենթադրվում է, որ դիցուք ուղղական հոլովով դրված բառը կարող է ստանձնել ենթակայի դեր, բայց դրանից բնավ չի բխում, թե ուղղական հոլովն է հենց ենթական: Մինչդեռ հենց այսպես են վարվում նրանք, որոնք ասում են, թե ուղղական հոլովը ենթակայի հոլովն է, հայցական հոլովը՝ ուղիղ խնդրի և այլն: Հոլովը ձևաբանական կարգ է և ունի իր կարգային ընդհանուր իմաստը, որ հոլովական իմաստն է: Այդ ընդհանուր իմաստը ստանում է մասնավոր արտահայտություններ նրա որոշակի գործառնությունների շնորհիվ՝ արդեն լեզվական հաջորդ ավելի բարձր մակարդակում՝ շարահյուսության մեջ:

«Հոլովի իմաստը, - գրում է էդ. Աղայանը, - չի նույնանում ոչ միայն շարահյուսական հարաբերության, մասնավոր շարահյուսական գործառնությի, այլև նախադասության մեջ արտահայտած նրա իմաստի հետ: Այստեղ ունենք նույնպիսի հարաբերություն, ինչպիսին կա մի կողմից բառի ու նրա շարահյուսական պաշտոնի, մյուս կողմից՝ բառային իմաստի և նրա խոսքային մասնավոր իմաստի միջև: Չէ՞ որ ոչ մի բառ, ինչպես և բառույթ, չենք կարող սահմանել որպես ենթակա կամ ուղիղ խնդիր, կամ տեղի պարագա և այլն: /.../ Շարահյուսական պաշտոնը և բառերի միջև շարահյուսական հարաբերություն ստեղծելը հոլովի, որպես քերականական կարգի, գործառնությունն է, ֆունկցիան, դերը, և

¹¹ Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 178:

ոչ թե ինքը քերականական կարգը: Այն, որ հրացանը գործադրվում է սպանելու համար, չի նշանակում, թե հրացանը սպանություն է»¹²:

Հոլովի ընդհանուր իմաստի և նրա շարահյուսական այս կամ այն որոշակի գործառնության միջև առկա են ճիշտ նույնպիսի կապ ու հարաբերություն, ինչպիսի կապ ու հարաբերություն գոյություն ունեն ընդհանուրի ու մասնավորի միջև, ասենք հնչյուլի և հնչյունի միջև: Ճիշտ այնպես, ինչպես այսինչ «մասնավոր, առանձին հնչյունը գոյություն ունի միայն այն չափով, որ չափով որ նա ընդհանուր հնչյուլի իրացումն է»¹³, մասնապես և հոլովի այսինչ շարահյուսական գործառնությոնը գոյություն ունի միայն այնքանով, որքանով որ նա տվյալ հոլովական ընդհանուր իմաստի մասնավոր իրացումն է: Այստեղից բխում է, որ հոլովները տարբերակելիս պետք է ելնել ոչ թե նրանց շարահյուսական գործառնությունից, այլ արտահայտած ընդհանուր իմաստներից:

Հարցը դիտարկելով այս տեսանկյունով նկատում ենք, որ մի կողմից մեկ և միևնույն հոլովի ընդհանուր իմաստը կարող է իրացվել շարահյուսական մի քանի, երբեմն բավականաչափ շատ գործառնությունով, մյուս կողմից՝ շարահյուսական միևնույն գործառնությոնը կարող է իրացվել մեկից ավելի հոլովներով, եթե նրանց հոլովական ընդհանուր իմաստը համատեղում է համապատասխան մասնավոր իմաստները:

Մենք, այսպիսով, առանձնացրինք հոլովի քերականական կարգի ընթերցման հիմն գլխավորապես սկզբունքները, որոնք համառոտ ձևակերպմամբ հանգում են հետևյալ դրույթներին.

1. Հոլովը ձև է, յուրաքանչյուր հոլով արտահայտվում է վերջավորությամբ կամ հերթագայությամբ, որով տարբերվում է մյուս բոլոր հոլովներից:
2. Հոլովը ունի իմաստ, որը հոլովված բառի քերականական ընդհանուր իմաստն է:
3. Հոլովական իմաստը և հոլովական ձևը կազմում են անբաժանելի միասնություն, որ գոյացնում է հոլովի քերականական կարգը:
4. Հոլովի կարգի հիմքում ընկած է ձևերի հակադրությունը: Ձևերի հակադրության նվազագույն դրսևորումը երկանդամ հակադրություն է: Հայերենի անվան հոլովական համակարգի հիմքում ընկած է հիմնադամանի հակադրությունը: Որոշ դերանուններ ունեն վեցանդամանի հակադրություն:
5. Հոլովի կարգը, ինչպես լեզվական բոլոր կարգերը, ներկայացնում է ընդհանուր և մասնավոր իմաստների անտրոհելի միասնություն: Մասնավոր իմաստը այլ բան չէ, քան ընդհանուր իմաստի իրացման մասնավոր արտահայտություն:

¹² Տես Ա. տ., էջ 180-181:

¹³ Н. С. Трубецкой, Основы фонологии, М., 1960, стр. 49.

Արդ՝ առաջնորդվելով այս սկզբունքներով՝ նկատում ենք, որ ժամանակակից արևելահայերենը ունի անվան 5 ձև, որոնք են, ըստ առաջին կամ հիմնական հոլովման 1/ *սար, սարի, սարից, սարով, սարում*: Առերևույթ այս սահմանումը կարծեք հակասում է առաջին կետում նշված սկզբունքին, ըստ որի յուրաքանչյուր հոլով արտահայտվում է որոշակի ձևով՝ *վերջավորությամբ կամ հերթագայությամբ*: Սար անվան դեպքում, թվում է, կան 4 վերջավորություններ՝ *-ի, -ից, -ով, -ում*: Իրականում այդպես չէ: Բառի սկզբնաձևը՝ *սար*, թեք ձևերին հակադրվում է իր *անվերջավոր* ձևով կամ, ինչպես ընդունված է նորագույն աղբյուրներում, իր *գրոյական /բացասական/* վերջավորությամբ: Այսպիսով, 4 վերջավոր /կամ հերթագայությամբ/ ձևերին գումարվում է նաև մեկ անվերջավոր ձևը, որով ստացվում են 5 ձևեր: Այդ 5 ձևերից յուրաքանչյուրը ներկայացնում է մեկական հոլով, որոնք ավանդական անվանումներով հորջորջվում են՝ *ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական, ներգոյական*: Նշված 5 հոլովներից յուրաքանչյուրը ունի իր հոլովական ընդհանուր իմաստը, որն իրացվում է մասնավոր դրսևորումներով՝ շարահյուսական համապատասխան գործառույթներով: Հոլովի ձևաբանական կարգային ընդհանուր իմաստը, այսպիսով, իր մասնավոր արտահայտությունն է ստանում հաջորդ շարահյուսական մակարդակի միավորների նախադասության անդամի կամ բառակապակցության բաղադրիչի ձևավորման միջոցով:

Հայերենի հոլովները ունեն ընդհանուր բնորոշ իմաստներ և շարահյուսական որոշակի գործառույթներ:

Ա. *Ուղղական հոլով*: Այն անվան ուղիղ ձևն է, այդ պատճառով էլ հաճախ կոչվում է անվանական /nominative/ հոլով: Աննշույթ հոլով է, ունի գրոյական ձև: Եթե *գրոն* ևս համարենք նշույթ, ինչպես ընդունված է ժամանակակից կառուցվածքային լեզվաբանության մեջ, ապա կարելի է ասել, որ այն ևս նշույթավոր է գրոյական նշույթով: Եվ իր գրոյական ձևով հակադրվում է մյուս չորս թեք հոլովներին, որոնք նշույթավոր են, ավելի ստույգ ունեն հնչյունական արտահայտությամբ թեքություն՝ ներառյալ հերթագայությամբ դրսևորվող ձևերը:

Ուղղական հոլովը ոչ միայն իր *ձևով /գրոյական ձևով/* է տարբերվում մյուս բոլոր *թեք* կոչված հոլովներից, այլև իր ընդհանուր հոլովական իմաստով: Ուղղական հոլովին հատուկ է «իմաստային անսահմանափակությունը /բացարձակությունը, լիաժապալությունը/», մինչդեռ մնացած թեք հոլովները հոլովական իմաստի «սահմանափակություն են ցույց տալիս», «անլիաժապալություն»¹⁴:

¹⁴ Գ. Ջահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 196:

Նկատի ունենալով ուղղական հոլովի արտահայտած, Գ. Ջահուկյանի ակնարկած իմաստային «անսահմանափակությունը», «բացարձակությունը» և «լիաժապալությունը» Մ. Ասատրյանը այդ իմաստի մեջ ներառում է նաև բառիմաստը։ Գրում է. «Ուղղական հոլովը ցույց է տալիս *բառիմաստն իր ամբողջ ծավալով, բացարձակ ձևով, առանց լրացուցիչ նշանակությունների*»¹⁵ /ընդգծումը հեղինակինն է/։ Սա խիստ վիճելի ձևակերպում է։

Անվան բառիմաստը նրա անվանողական իմաստն է, որ հաճախ կոչում են նաև բառարանային իմաստ, որը ոչ մի առնչություն չունի հոլովական, տվյալ դեպքում ուղղական հոլովի իմաստի հետ։ Ուղղական հոլովի իմաստը բառիմաստին զումարվող հենց այն «լրացուցիչ նշանակությունն է», որ հեղինակը բացառում է «առանց» կապով /«*առանց լրացուցիչ նշանակությունների*»/։ Անվան բառիմաստը նույնությամբ, անփոփոխ պահպանվում է բոլոր հոլովներում։ Եվ սրանք միմյանցից տարբերվում են ոչ այլ բառով, քան նույն բառիմաստին հավելվող այդ «լրացուցիչ նշանակություններով», տվյալ դեպքում հոլովական ընդհանուր իմաստներով։ Ասենք նաև, որ հոլովական իմաստը կարող է զուգորդվել և թվի քերականական կարգով, հաճախ առկայացման կարգով ևս։

Ուղղական հոլովի ընդհանուր իմաստի շարահյուսական մասնավոր գործառնություններն են ենթակա, գոյական ստորոգելի, անվանական միակազմ նախադասության կենտրոնական անդամ, կոչական, կողմնակի ենթակա, ուղիղ խնդիր /իրի առումով/, տեղի, ժամանակի, նպատակի, չափ ու քանակի պարագաներ, գոյական որոշիչ և այլն։

Բ. Սեռական-տրական հոլով։ Սա նշույթավոր հոլովածն է։ Այս հոլովի իմաստն արտահայտվում է կամ բառաբնին համապատասխան վերջավորության կցումով, այսինքն՝ կցականության սկզբունքով, կամ բառաբնի մեկ կամ երկու հնչյունների հերթազայությամբ, այսինքն՝ թեքականության սկզբունքով։ Այս կաղապարումները առանձին քննության նյութ են, որոնց այժմ չենք անդրադառնա։ Ջահուկյանի տերմինաբանությամբ բոլոր թեք հոլովների բնորոշ հատկանիշը հոլովական ընդհանուր իմաստների սահմանափակվածությունն է, անլիաժապալությունը, անբացարձակությունը։ Սիւս այս իմաստային սահմանափակվածությունն իր հերթին դրսևորում է իմաստային բազմանդամ հակադրություններ, որոնց եզրերից մեկն էլ հենց ներկայացնում է սեռական-տրական հոլովը։ Սրա հոլովական ընդհանուր իմաստը բնորոշվում է ստացականությամբ կամ հատկացականությամբ կամ լայն առումով հանգակետայնությամբ /Գ. Ջահուկյանի տերմինով/։

¹⁵ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Եր., 1983, էջ 71։

Մ. Ասատրյանը, սեռական-տրական հոլովի համար բնորոշ համարելով հանգման ընդհանուր իմաստը, այն բաժանում է 2 իմաստային խմբերի, որոնցից մեկը «սեռական-տրականի՝ վերադրի պաշտոնում հանդես է գալիս որպես առարկայական հանգում /վերաբերություն, ստացականություն/», մյուսը «ոչ վերադրի պաշտոնում գործողության հանգում /ուղղվածություն դեպի առարկան/»¹⁶: 2 դեպքում էլ առկա են ստացականության ու հատկացականության ընդհանուր հոլովական իմաստները:

Սեռական-տրական հոլովի ընդհանուր իմաստի շարահյուսական մասնավոր իրացումներն են՝ կողմնակի ենթակա, հատկացուցիչ, գոյական որոշիչ, ուղիղ խնդիր /անձի առումով/, հանգման խնդիր, տեղի, ժամանակի, նպատակի, ձևի պարագաներ, ստորոգելի և այլն:

9. *Բացառական հոլով*: Այս հոլովը ձևավորվում է բառահիմքին *-ից* կամ *ուց* վերջավորության կցումով, այսինքն՝ կցականության սկզբունքով: *Ուց* ստանում են միայն *ու* վերջադրական հոլովման բառերը չհաշված շեղումները կամ անկանոնությունները, ինչպես *սիրո-սիրուց, հնի-հնուց* /նաև *հնից*, որ կանոնիկ ձևն է, և այլն/: Սնացած բոլոր հոլովումներին պատկանողները, ինչպես նաև հոգնակի բացառականը ստանում են *ից* վերջավորություն: Բացառականը սեռական-տրականի իմաստային հակադրությունն է ցույց տալիս: Եթե սեռական-տրականը արտահայտում է հանգում, ամենալայն իմաստով՝ ստացականություն, ապա բացառականը նշում է ելման, անջատման հարաբերություն, ամենալայն իմաստով այլ կերպ ասած՝ *ելակետայնություն, սկզբնակետայնություն, մեկնակետայնություն*: Այս հոլովի ընդհանուր իմաստի շարահյուսական մասնավոր իրացումներն են անջատման, ներգործման, վերաբերության, սահմանափակման, բաղկացության խնդիրներ, գոյական ստորոգելի, գոյական որոշիչ, տեղի, ժամանակի, պատճառի, հիմունքի պարագաներ և այլն:

7. *Գործիական հոլով*: Այս հոլովը ձևավորվում է բառահիմքին *-ով* կամ *-բ* ձևությամբ կցելով, այսինքն՝ կցականության սկզբունքով: *-Բ* ստանում են սովորաբար *-ություն, ում* ածանցներով բաղադրված բառերը, *յուն* վերջնահանգով *արյուն* բառը, որտեղ հիշյալ վերջնահանգը ածանց չէ /*արյուն > արյամբ* /նաև *արյունով*/, *անուն* գոյականը /*անվամբ* կամ *անունով*/: *Յնչյուն, դոփյուն, կարկաչյուն* և նման բառերի գործիականը կազմվում է միայն *-ով* մասնիկով:

Գործիականը իր հոլովական ընդհանուր իմաստով հակադրված է մի կողմից սեռական-տրականին, մյուս կողմից՝ բացառականին: Եթե այդ 2 հոլովները իմաստով հակադրվում են միմյանց, որքանով որ առաջինը ամենալայն իմաստով արտահայտում է հանգում, ստացականություն, երկրորդը՝ անջատում, մեկնակետայնություն, ապա գործիականը յուրովի հակադրվում է այդ

¹⁶ Մ. Ասատրյան, հիշ. աշխ., էջ 73:

երկուսին՝ միասին վերցրած, քանի որ միավորում է այդ 2 իմաստները իրենց լրիվ ծավալով՝ արտահայտելով և անջատմանը, և հանգամանք «ուղեկցում կամ մասնակցություն սկզբից մինչև վերջ»:¹⁷

Գործիականի հոլովական ընդհանուր իմաստի շարահյուսական մասնավոր գործառույթներն են՝ միջոցի, ներգործման, սահմանափակման խնդիրներ, գոյական որոշիչ, գոյական ստորոգելի, տեղի, ժամանակի, հիմունքի, ձևի, միասնության, չափ ու քանակի, նաև զնի, նպատակի /հազվադեպ/ պարագաներ և այլն:

Ե. *Ներգոյական հոլով*: Այս հոլովը ձևավորվում է բառահիմքին *–ում* վերջավորության կցումով: Այսպիսով՝ այն ևս բացառական և գործիական հոլովների նման կաղապարվում է կցականության սկզբունքով: Ներգոյականի հոլովական ընդհանուր իմաստը բնորոշվում է պարունակության հատկանիշով:

Տեղանիշ կամ իբրև այդպիսին ընկալվող բառերի ներգոյականը արտահայտում է տարածական պարունակություն, ժամանականիշ գոյականների ներգոյականը՝ ժամանակային պարունակություն: Ըստ այդմ՝ ստացվում է առաջին դեպքում՝ տարածության ծավալային առկայություն կամ ներկայություն, երկրորդ դեպքում՝ ժամանակի ծավալային առկայություն կամ ներկայություն /ժամանակահատվածի սկզբից մինչև վերջը կամ ողջ ժամանակահատվածը/: Տարածության կամ ժամանակի *սկզբնակետից* մինչև *վերջնակետը* առկա կամ ներկա լինելու հանգամանքով պայմանավորված՝ էդ. Աղայանը ներգոյական հոլովի մեջ տեսնում է «գործողության տարածական ու ժամանակային սահմանափակման քերականական իմաստ»:

Ժամանակակից հայերենում գոյական անունը ներգոյական հոլովի նկատմամբ պակասավոր է: Ոչ բոլոր գոյականները ունեն այդ հոլովը: Անձնանիշ հատուկ ու հասարակ անունները, կենդանանիշ գոյականները չունեն այդ հոլովը: *–Ցի /–ացի, –եցի/, –ենք, –անք, –ոնք, –ունք* ածանցներով բաղադրված գոյականները, որոնք նույնպես անծի իմաստ են արտահայտում, զուրկ են ներգոյական հոլովից:

Այդ հոլովը սովորաբար չեն ունենում նաև *–եղեն, –ություն, –ում* ածանցներով բաղադրված անունները: Ներգոյական հոլովի ընդհանուր իմաստի շարահյուսական մասնավոր կիրառություններն են տեղի, ժամանակի, ժամանակի տևողության չափի պարագաներ, հազվադեպ ձևի պարագա /Մտքում կարդա/, սահմանափակման և վերաբերության խնդիրներ:

¹⁷ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 197: